Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 585 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ, ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԹԹՎԱԾՆԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Բնակչությանը բժշկական ծառայությունների մատուցման պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է վերանորոգել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ քաղաքի «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վիրաբուժական մասնաշենքի վիրահատարանը, բարեկարգել տարածքը և կառուցել թթվածնային կայան:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456):
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456):
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ քաղաք, առողջապահական:

6.	Ծրագրի բյուջեն	41,225,985 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	«Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն (ՀՎՀՀ՝ 07806692, հասցե՝ Ա. Մանուկյան փողոցի 25 շենք, 4201):
8.	Ծրագրի իրականացման տեւողությունը	2026 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2027 թվականի օգոստոսի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է վերանորոգել Տավուշի մարզի Բերդ քաղաքի «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վիրաբուժական մասնաշենքի վիրահատարանը, բարեկարգել տարածքը և կառուցել թթվածնային կայան: Վերանորոգման աշխատանքների շրջանակներում իրականացվելու են պատերի հիմնակմախքի վերանորոգման, նոր դռների և պատուհանների տեղադրման, հատակների փոխարինման, աստիճանավանդակի վերանորոգման, ներքին և արտաքին հարդարման և օդափոխության համակարգի սարքավորումների տեղադրման աշխատանքները, ասֆալտապատվելու է բակային տարածքը, կառուցվելու է թթվածնային կայան: Իրականացվելու է՝ 2026 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2027 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում՝ 41,225,985 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	«Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վիրաբուժական մասնաշենքի վիրահատարանի վերանորոգում, տարածքի բարեկարգում և թթվածնային կայանի կառուցում՝ 41,225,985 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվի տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ